
TUMO
CENTER FOR CREATIVE TECHNOLOGIES
#TUMO4ArtsakhTeens
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՌՈՂՋԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԿՐԹԱԿԱՆ
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ
| ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԲԸՄ (AGBU)

ՀԲԸՄ-ի «Կլաուդիա Նազարյան» բժշկական կենտրոնը առաջարկում է հիվանդությունների կանխարգելման և հոգեկան առողջության պահպանման ծառայություններ, ինչպես նաև խորհրդատվություն երեխաների և մեծահասակների համար:

Բժշկական կենտրոնն առաջարկում է անվճար արտահիվանդանոցային բուժօգնություն, սպասարկում և խորհրդատվություն հետևյալ ոլորտներում՝

- Մանկաբուժություն
- Սրտաբանություն
- Հոգեբանություն
- Գինեկոլոգիա
- Ակնաբուժություն
- Քիթ-կոկորդ-ականջաբանություն

Կենտրոնը գտնվում է Զաքարիա Քանաքեռցու փողոց 1 հասցեում:

Բժշկական կենտրոնի ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է նախօրոք գրանցվել +374 11 512 253 հեռախոսահամարով:

ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց բժշկական օգնությունն ու սպասարկումը, այդ թվում՝ հիվանդանոցային, իրականացվում է պետական պատվերի շրջանակներում: Ըստ կարիքի անձը կարող է դիմել կեցության վայրին մոտ գտնվող ամբուլատորիա, պոլիկլինիկա, կանանց կոնսուլտացիոն կենտրոն կցագրվելու նպատակով, ինչից հետո հնարավոր կլինի օգտվել պետական պատվերի շրջանակներում տրամադրվող անվճար բուժօգնությունից՝ ներառյալ ամբուլատոր պայմաններում անվճար տրամադրվող դեղերը:

Մանրամասներին ծանոթանալու և դիմելու համար՝ https://bit.ly/3C3dCXw